ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 4 » ապրիլի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ԳԲԽ-33/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 20.03.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.03.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԲՀԿ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի

այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակից «Սպարապետ» ՍՊԸ-ն ներկայացրած հայտի գնային առաջարկում ԱԱՀ-ի գումարը սխալ է հաշվարկել:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմք նշվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասը, 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ն խնդրել է կասեցնել Ընթացակարգը, չեղյալ հայտարարել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2017թ. թիվ 3 որոշումը և մերժել «Սպարապետ» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը, մասնակցելով 24.03.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած ԳԲԽ-33/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է բողոքով ներկայացրած պահանջն ամբողջությամբ, միաժամանակ ի լրումն բողոքի ներկայացրել է գրություն, որով խնդրել է բողոքով ներկայացրած պահանջներից բացի նաև չեղյալ հայտարարել Պատվիրատուի և «Սպարապետ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը, ինչպես նաև դադարեցնել «Առավոտ» ԲՀԿ-ի կողմից պայմանագիր կնքելու մասին որոշումը, քանի որ «Առավոտ» ԲՀԿ-ն խախտել է Օրենքի 9-րդ հոդվածի պահանջները, այն է՝ պայմանագիրը կնքել է 20.03.2017թ., մինչդեռ պետք է կնքեր 21.03.2017թ.-ին:

2. «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպությունը 22.03.2017թ. թիվ 013 գրությամբ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչված «Սպարապետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ԱԱՀ-ն հաշվարկվել է 16,67%-ով՝ վճարվելիք ընդհանուր գումարի նկատմամբ:

Կազմակերպության հայտի գնային առաջարկի 3-րդ, 4-րդ, 5-րդ տողերի հանրագումարը համապատասխանում է 6-րդ տողին: Բյուջեի նկատմամբ ԱԱՀ-ի գումարը պակաս չի գրանցվել:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 2 արձանագրությունը, ըստ որի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով հաղթող է ճանաչվել «Սպարապետ» ՍՊԸ-ն, քանի որ նրա առաջարկած գները ցածր էին «Ֆոտոն» ՍՊԸ-ի առաջարկած գներից, իսկ 5-րդ և 7-րդ չափաբաժիններով հաղթող է ճանաչվել «Ֆոտոն» ՍՊԸ-ն, արդյունքում «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության և «Սպարապետ» ՍՊԸ-ի միջև 20.03.2017թ. կնքվել է պայմանագիր:

Պատվիրատուն, մասնակցելով 24.03.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած ԳԲԽ-33/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, առարկել է Ընկերության կողմից ներկայացված բողոքի դեմ՝ ներկայացնելով գրավոր առարկությունը:

3. ԳԲԽ-33/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-33/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԲՀԿ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Սպարապետ» ՍՊԸ-ն:

2. Կազմակերպությունն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով գնային առաջարկը թվով 10 չափաբաժինների համար ներկայացրել է հետևյալ տեսքով՝

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը (տառերով և թվերով)
1	2	3	4	5	6
1.	Այուր	742394	74240	**163366**	980000 (ինը հարյուր ութսուն հազար)
2.	Շաքարավազ	318169	31817	**70014**	420000 (չորս հարյուր քսան հազար)

3.	Յուղ բուսական (ձեթ)	462102	46211	**101687**	610000 (վեց հարյուր տաս հազար)
4.	Բրինձ	249990	24999	**55011**	330000 (երեք հարյուր երեսուն հազար)
5.	Ձավար	249990	24999	**55011**	330000 (երեք հարյուր երեսուն հազար)
6.	Հավի ձու	439376	43938	**96686**	580000 (հինգ հարյուր ութսուն հազար)
7.	Պանիր	587098	58710	**129192**	775000 (յոթ հարյուր յոթանասունհինգ հազար)
8.	Կարագ	1969618	196962	**433420**	2600000 (երկու միլիոն վեց հարյուր հազար)
9.	Միս (հավի)	833300	83330	**183370**	1100000 (մեկ միլիոն հարյուր հազար)
10.	Կարտոֆիլ	416650	124995	**108355**	650000 (վեց հարյուր հիսուն հազար)

3. ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.03.2013թ. թիվ 1.1/13.1/4089-13 շրջաբերականով հայտնել է, որ գնային առաջարկը գնահատվում է անբավարար և մերժվում է այն դեպքում, երբ նշված ԱԱՀ-ի գումարը չի համապատասխանում «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.03.2017թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով որոշում է կայացրել ընտրված մասնակիցներ ճանաչել՝ «Սպարապետ» ՍՊԸ-ին՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով, իսկ «Ֆոտոն» ՍՊԸ-ին՝ 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 14.03.2017թ. թիվ 3 որոշմամբ հաստատված՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված՝ անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օրը ներառյալ, ինչպես նաև ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կկնքվի անգործության ժամկետի ավարտից հետո: Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը Պատվիրատուի կողմից հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ ***15.03.2017թ.***:

6. «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության և «Սպարապետ» ՍՊԸ-ի միջև ***20.03.2017թ.*** կնքվել է «ԱԲՀԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

7. ***20.03.2017թ.*** ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքով «Ֆոտոն» ՍՊԸ-ն խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգը:

8. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն՝ ի դեմս ԳԲԽ-33/17 բողոքը քննող հանձնաժողովի, 24.03.2017թ. կայացրած որոշմամբ, բավարարել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

4. ԳԲԽ-33/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 20.03.2017թ. բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, 24.03.2017թ. ի լրումն բողոքի, «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության 22.03.2017թ. թիվ 013 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը ***պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա*** և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ

բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ***, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը.

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով, «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱԲՀԿ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն և «Սպարապետ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.03.2017թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով որոշել է Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Սպարապետ» ՍՊԸ-ին:

Կազմակերպությունն Ընթացակարգի թվով 10 չափաբաժինների համար ներկայացրած հայտի հավելված N 4 գնային առաջարկը ներկայացրել է՝ նշելով ԱԱՀ-ի սխալ հաշվարկ, քանի որ համաձայն «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, ինչպես նաև, եթե ԱԱՀ վճարող

համարվող անձն ԱԱՀ-ի գումարը չի արտացոլել ԱԱՀ-ի հաշվարկի համապատասխան տողերում, ***ապա ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափի կիրառմամբ*** (այսինքն՝ ինքնարժեք + շահույթ X 20%):

Պատվիրատուն 22.03.2017թ. թիվ 013 գրությամբ, ըստ էության, ընդունել է, որ Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչված «Սպարապետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ԱԱՀ-ն հաշվարկվել է ոչ թե ***20 տոկոս դրույքաչափի կիրառմամբ, այլ 16,67%-ով***:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.03.2013թ. թիվ 1.1/13.1/4089-13 շրջաբերականով հայտնել է, որ գնային առաջարկը գնահատվում է անբավարար և մերժվում է այն դեպքում, երբ նշված ԱԱՀ-ի գումարը չի համապատասխանում «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, միաժամանակ որպես օրինակ նշելով հետևյալ դեպքը. «եթե գնային առաջարկը ներկայացված է հետևյալ կերպ՝ 90 ՀՀ դրամ /ինքնարժեք/ + 10 ՀՀ դրամ /շահույթ/ + 16 ՀՀ դրամ /ԱԱՀ/= 116 ՀՀ դրամ (մեկ հարյուր տասնվեց ՀՀ դրամ) /առաջարկված գինը տառերով և թվերով/, ապա հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, քանի որ տվյալ դեպքում ***նշված ԱԱՀ-ի գումարը չի համապատասխանում «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին»:***

Կենտրոնն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ «Սպարապետ» ՍՊԸ-ի հայտը՝ գնային առաջարկը, հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով (նշված ԱԱՀ-ի գումարը չի համապատասխանում «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին)՝ նշված փուլում ենթակա էր մերժման, սակայն չի մերժվել և շարունակվել է ընթացակարգը, արդյունքում «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության և «Սպարապետ» ՍՊԸ-ի միջև ***20.03.2017թ.*** կնքվել է «ԱԲՀԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-1» ծածկագրով պայմանագիր:

Ի լրումն ներկայացրած բողոքի, Ընկերությունը 24.03.2017թ. ներկայացրած գրությամբ խնդրել է Պայմանագիրը հայտարարել չեղյալ:

Այսպիսով, Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ ***15.03.2017թ.***, որով անգործությունը սահմանվել է ***5 օրացուցային օրը ներառյալ,*** իսկ

Պայմանագիրը կնքվել է ժամկետից շուտ՝ 20.03.2017թ., այսինքն անգործության ժամանակահատվածում:

Գտնում ենք, որ նման պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել են նաև Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, համաձայն որի՝ անգործության ժամկետը ***պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան*** ***(15.03.2017թ.)*** ***հաջորդող օրվա (16.03.2017թ.)*** և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: Այսինքն, Պատվիրատուն իր կողմից պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությամբ անգործության ժամկետը սահմանվել է 5 ***օրացուցային օրը ներառյալ,*** ինչը նշանակում է, որ Պայմանագիրը կնքվել է ժամկետից շուտ՝ 20.03.2017թ., այսինքն անգործության ժամանակահատվածում, այնինչ պետք է կնքվեր հաջորդ օրը՝ 21.03.2017թ.:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ *օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է,* եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Հայտնում ենք, որ Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ բողոքն ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, ***սակայն մինչև խորհրդի կողմից նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքը համարվում է անվավեր:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***խորհուրդն իրավունք ունի չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը*** Օրենքի 9-րդ հոդվածի կամ ***49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում***, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենս

դրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

Ընկերությունը ***20.03.2017թ.*** ներկայացրած բողոքով, հիմք ընդունելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջը, միջնորդություն է ներկայացրել Ընթացակարգը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին, ինչը բավարարվել է Խորհրդի 24.03.2017թ. որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագիրը կնքվել է անգործության ժամանակահատվածում, ինչպես նաև Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, Պատվիրատուն իրավունք չուներ կնքելու պայմանագիր, ուստի «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության և «Սպարապետ» ՍՊԸ-ի միջև ***20.03.2017թ.*** կնքված «ԱԲՀԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-1» ծածկագրով պայմանագիրը (մինչև միջնորդության կապակցությամբ որոշում կայացնելը) կնքվել է Օրենքի պահանջների խախտմամբ, իսկ նման պայմանագիրը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն, անվավեր է և Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ենթակա է չեղյալ հայտարարման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Ֆոտոն» ՍՊԸ-ի 20.03.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել.

ա. դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2017թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով՝ «Սպարապետ» ՍՊԸ-ին՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

բ. դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 14.03.2017թ. թիվ 3 որոշմամբ կայացված՝ պայմանագիր կնքելու մասին որոշում ը,

գ. չեղյալ հայտարարել «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության և «Սպարապետ» ՍՊԸ-ի միջև 20.03.2017թ. կնքված «ԱԲՀԿ-ՇՀԱՊՁԲ-17/1-1» ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների վերապատրաստման և
խորհրդատվության բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-33/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան